ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2206-Ա « 03 » հունիսի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
03.06.2025թ.
հ. 2206-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստա-յին դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Մարգարիտա Միրզախանյան /լիազորված անձ/ Հովարդ Հակոբյան	Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 3-րդ փողոց, հ.44	հողամաս	Հովարդ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 3-րդ փողոցի հ.44 հաս-ցեում գտնվող հողամասին /վկ. հ.10102024-01-0474/ տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 30-րդ փողոց, հ.66	01113RMM6BNW	
2	Մելիք Կարապետյան /լիազորված անձ/ Ծովինար Գևորգյան	Նուբարաշեն Զ-5 թաղամաս, հ.1/1, հ.1/2, հ.1/3, հ.1/4, հ.1/5 և հ.1/6	հողամաս	Ծովինար Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող, Նուբարաշեն Զ-5 թաղամասի հ.1/1, հ.1/2, հ.1/3, հ.1/4, հ.1/5 և հ.1/6 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.24082023-01-0271, հ.24082023-01-0274, հ.24082023-01-0277, հ.24082023-01-0278, հ.24082023-01-0283 և հ.24082023-01-0286/, ըստ միավորման հատակագծի, տրամադրել մեկ միասնական հասցե՝ Նուբարաշեն Զ-5 թաղամաս, հ.1/1	01103HGRA39P	
3	Կարեն Մարտիրոսյան	Թումանյան փողոց, հ.5 շենք, բն.12	բնակարան	26.05.2025թ. հ.ԱՇԹԴ/6/3414-25 ավարտական ակտի /շահագործ-ման թույլտվություն/ համաձայն, Կարեն Մարտիրոսյանի կողմից, Թումանյան փողոցի հ.5 շենքի հ.12 հասցեում վերակառուցված և վերահատակագծված 40.0քմ մակերեսով բնակարանին տրամադրել հասցե՝ Հ.Թումանյան փողոց, հ.5 շենք, բն.12/1	01063MQ7FZBV	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ